



ԲԵՂԵՔԵՐԱՆ ՏԵՍՏԱՐԱԲԻՆ

Վիեննա, 28 Յուլիս, 1890:

Պիզմարք չուզեր միոցուիլ: Ատենապետութենէն հրաժարելէն ետեւ ամիս մը չ'անցնիր, որ Նրքեմն-Ատենապետն այս կամ՝ այն լեռքի լեռնակցին չ'այստէն քաղաքականութեան այժմու դրեցմբայիս ունեցած կարծիքն: Ի մէջ այլոց՝ ամուրջ սկիզբն այնպիսի յայտնութիւն մ'ըրաւ *Hamburger Nachrichten* լրագրոյն մէջ, որ եւրոպական ամէն լրագիրներու քանի մը շարքաթուման նիւթ տուաւ խորհրդածեւու. իսկ Աւստրիոյ-Հունգարիոյ քաղաքագիտաց եւ լրագրաց գայրոյթն վերջին աստիճանի գրգռեց իրեն ղէմ, եւ Նրից դաշնակցութիւնն սկսաւ պահ մը տատանիլ: Յիշեալ յօդուածոյն մէջ Նրքեմն-Ատենապետն Աւստրիոյ ղէմ՝ իւր ծածկեալ հին նենգութիւնն հրապարակ հանեց, եւ յայտնեց որ Նրից դաշնակցաց մէջ Գերմանիա վարչութեան սանձն միշտ պիտի ունենայ, եւ եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար՝ հարկ է որ Ռուսիոյ հետ քարեկամութեան մէջ մտայ, եւ ի դիպուածի անխամաճայութեան Աւստրիոյ եւ Ռուսիոյ Գերմանիա պետք է որ երկուքին մէջ միջնորդ ըլլայ: Թէ՛ Աւստրիոյ եւ թէ՛ մանաւանդ Հունգարիոյ մամուլն այս յայտնութեան վրայ զայրացած՝ քաջատրութեանց ամենայն ննարատոր խտտութեամբն յայտնեցին միաբան թէ Նրից դաշնակցութիւնն հաւասար իշխանութեանց մէջ է, եւ յիշեալ երկու պետութեանց հաշտութեան համար Աւստրիա-Հունգարիա միջնորդի ամենեւին պէտք չունի եւ չի կրնար գործի ըլլալ ուրիշին ճնոքն: Խնդիրն այնու առաւել ծանր կ'երեւար որ Քաղքիվի, Գերմանիոյ այժմու Ատենապետն, իւր առաջին ծառին մէջ ըսած էր՝ թէ ինքը Գերմանիոյ ցայսօր ըռնած քաղաքական շաւղէն պիտի չեղի եւ Նրից դաշնակցաց յարաբերութիւնները պիտի պահէ:

Գերմանական լրագիրներն ի գուր կը ջանան միողմացնել Պիզմարքի յիշեալ

խօսքերուն ազդեցութիւնը: Ի մէջ այլ լրագրաց՝ *Wiener Allgemeine Zeitung* կէս պաշտօնական լրագիրն այս մասին գրած խիստ յօդուածոյն մէջ ըսելէն ետեւ՝ որ Պերլին ինք զինք ի գուր կը խաթթ թէ այն յօդուածն Աւստրիոյ-Հունգարիոյ մամուլն բով ծանրակշռութիւն չի գտնար, կը վերջացնէ այսպէս. «Աւստրիոյ լեռնապետութեան դիմաց, օգուտ օգուտ փոխարէն, միայն այս յատկութեամբ կրնայ գերմանական-աւստրիական դաշնակցութիւնն ունենալ հիմն եւ ապագայ:

Վերջին ամիսը միջոցին Գերմանիոյ եւ Անգլիոյ փոխադարձ քարեկամութեան մեծ ցոյց մի սեծապէս զարմացուց այն պետութիւններն, որոնք այլոց ամէն շարժումներն մանր կը դիտեն: Անգլիա Գերմանիոյ պարզեցեց Հիսպանիոյ ծովու Հելկոլանտ կղզին, որով Գերմանիա նոյն ծովու մէջ նաւական մեծ զօրութեան մը կենդրոն պիտի ունենայ: Իսկ Գերմանիա իւր կողմանէ Ափրիկէի մէջ Անգլիոյ շահերուն շատ նպաստաւոր շնորհումներաւ, ի մասնաւորով՝ Չանգիպար յանձնուեցաւ Անգլիոյ պաշտպանութեան, որով երկու կողմն ալ լիովին զոհութեամբ եւ միաբան ծայրիկ Մենակներու՝ հաւանեցան այս դաշնադրութեան:



ԲՈՒՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՌԵՍԵՐՄԵՆԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Երրուան, Խիզան եւ Տատիկ զատաններ. 177:

ԳՐԱԿԱՆ — Ազգային հրատարակութիւնը 1889 տարւոյ. 181:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Զմեռնիկ եւ ազգայինը. 183:

ԴՊՐՈՑԱԿԱՆ — Տարեկան ձմեռնութիւնը եւ Մրցանակաբաշխութիւն. 184:

ՌԻԶԻԳՐՈՒԹԻՒՆ — Եղբայր մի Տփղիս (Ուղեւորի Յիշատակարան). 186:

ՍՆԵԿԵՆՏ

ՆՈՐԱՆՈՒԹ — Ուղեւորութիւն յԱմերիկա շուրջ օրւան մէջ. 191:

ՏՅՏԵՆԱԿԱՆ — Գունատաճ լուսանկարը Նորոգել. 191:

ՄԱՆՐԱՆՈՒԹ — Եւրոպայի մեծ զրատուններն. 191:

— Ռուսաստանի լրագիրներն. 191:

ԲԵՂԵՔԵՐԱՆ ՏԵՍՏԱՐԱԲԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՐ ԽՈՐԱԿԱՐ

Գ. ԲԱՐՈՅԵԼ Կ. ՊԱՐԱՆԶ

ՎԻԵՆՆԱ. ԻՄԻՏԵՐԲՆԵՆ ՏՊԱՐԱՆ